ՀՀ ներքին գործերի նախարարության

ֆինանսաբյուջետային վարչության պետ

Վարդան Պետրոսյանին

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Համիկ Հրաչիկի Օհանյանի կողմից 2025 թվականի հունվարի 10-ից մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ

1.Ամփոփել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրած բյուջետային ֆինանսավորման հայտ-պահանջագրերը և ներկայացրել ֆինանսավորման ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

2. Գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգ եմ մուտքագրել ՀՈԳՎ Սյունիքի բաժինների 2025թ բյուջետային ծախսերի և սոցիալական փաթեթի գծով կատարվող վճարումների համար նախատեսված չափաքանակները և ժամանակացույցերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման:

3.Ներկայացրած հայտ պահանջագրերով բացված ֆինանսավորումների հիման վրա կատարել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների աշխատավարձերի, գործուղումների, բնակարանների վարձակալության դիմաց վճարվող դրամական փոխհատուցումների, սոցիալական փաթեթի գծով կատարված ծախսերի վճարումները:

4.Կազմել եմ կուտակիչ տեղեկագրեր ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրած հաշվարկների համար, տարանջատել մեկ հաշվից կատարված դրամարկղային ծախսերը՝ ըստ առանձին բաժինների հաշվառումը վարելու համար:

5.Ընդունել և ամփոփել եմ ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրած աշխատավարձի, դրան հավասարեցված այլ վճարումների, գործուղումների և բնակարանների վարձակալության դիմաց վճարվող փոխհատուցումների վերաբերյալ հունվար և փետրվար ամիսների հաշվետվությունները և ներկայացրել ֆինանսաբյուջետային վարչություն:

6.ՔՈԳՎ Սյունիքի մարզային վարչության ծառայողների համար կազմել եմ դրամական վարձատրության վկայականներ և ներկայացրել ֆինանսաբյուջետային վարչություն :

7.ՔՈԳՎ Սյունիքի մարզային վարչության համար սահմանված ժամկետում կազմել և էլեկտրոնային եղանակով հարկային մարմին եմ ներկայացրել եկամտային հարկի և սոցիալական վճարի 2024թ. դեկտեմբեր ամսվա ամփոփ հաշվարկները:

8. Կատարել եմ ՔՈԳՎ Սյունիքի մարզային վարչության հիմնական միջոցների 2024 թվականի մաշվածության հաշվարկները, պատրաստել 2024թ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը կից հաշվետվություններով, ամփոփել ՀՈԳՎ Սյունիքի բաժինների կողմից ներկայացրածները և սահմանված ժամկետում ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:

9.Կատարել եմ ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարարականները, շրջաբերականների պահանջները, հետևել ցուցումներին, պարզաբանումներին, նորմատիվ իրավական ակտերի փոփոխություններին:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Հասմիկ Օհանյան

«30» ապրիլ 2025 թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները գնահատում եմ __________:

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

«30» ապրիլ 2025 թիվ